Հաստատված է
ԳՊՀ գիտական խորհրդի
2017թ. թիվ 1 նիստում
Ռեկտոր՝ Ռ. Խ. Հակոբյան
«15» փետրվարի 2017թ.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգը սահմանում է ԳՊՀ-ում (այսուհետ՝ Համալսարան) հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի գիտակրթական ծրագրի (այսուհետ՝Ծրագիր) իրականացման կանոնները, Ծրագրի կառուցվածքը, կրթական և հետազոտական մոդուլների աշխատածավալները՝ հիմք ընդունելով «ՀՀ-ում ասպիրանտուրայի ընդունելության և ուսուցման, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման կարգը»:

1.2. Ասպիրանտուրա ընդունված անձը (այսուհետ՝ ասպիրանտ) Ծրագրի իրականացման ընթացքում

ա) ապահովվում է Համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատված աշխատանքային պլանով,

բ) ունենում է սահմանված կարգով հաստատված ատենախոսության թեմա և գիտական ղեկավար,

գ) հանձնում է ուսումնական ծրագրով նախատեսված քննությունները, ստուգարքները, կուտակում համապատասխան կրեդիտներ,

դ) պատրաստում ատենախոսություն, անցկացնում ատենախոսության նախնական պաշտպանություն:

1.3. Գիտական հետազոտություններ կատարելիս՝ ասպիրանտն օգտվում է Համալսարանի գիտական սարքավորումներից, համակարգչային տեխնիկայից, ուսումնական լաբորատորիաներից, գրադարաններից, բուհի կրթական, հետազոտական և այլ ռեսուրսներից:

1.4. Ըստ աշխատանքային պլանի՝ տարեկան մեկ անգամ ամբիոնի կողմից իրականացվում է ասպիրանտի ատեստավորում:

1.5. Համապատասխան ամբիոնում, ֆակուլտետի խորհրդում, Համալսարանի գիտական խորհրդում պարբերաբար լսվում և քննարկվում են ասպիրանտների և նրանց գիտական ղեկավարների հաշվետվությունները:

1.6. Ատեստավորում չանցած ասպիրանտը Համալսարանի ռեկտորի հրամանով ազատվում է ասպիրանտուրայից:

1.7. Համալսարանից հեռացված ասպիրանտը կարող է սահմանված կարգով վերականգնվել ասպիրանտուրայում:

1.8. Ատենախոսությունը չպաշտպանած ասպիրանտներին, իրենց ցանկությամբ, անվճար

տրվում է Համալսարանի կողմից սահմանված ակադեմիական տեղեկանք:

1.9. Ասպիրանտների հետ կնքված պայմանագրերում ներառվում են վերոգրյալ դրույթները:

2. ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

2.1. Հիմք ընդունելով «ՀՀ-ում ասպիրանտուրայի ընդունելության և ուսուցման, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման կարգը»՝ ասպիրանտուրայում Ծրագրի տևողությունը հեռակա ուսուցմամբ՝ 4 տարի է, 180 կրեդիտ գիտաուսումնական աշխատածավալով: 30 ժամը համարժեք է մեկ կրեդիտին:

2.2. Ծրագրում ուսումնական կառուցամասի աշխատածավալը կազմում է 45 կրեդիտ, իսկ հետազոտական կառուցամասը՝ 135 կրեդիտ:

Կրթական կառուցամասը ընդգրկում է պարտադիր և կամընտրական դասընթացներ՝ ընդհանուր 26 կրեդիտ աշխատածավալով, մանկավարժական և հետազոտական պրակտիկաներ՝ 9 կրեդիտ աշխատածավալով, որակավորման քննություններ՝ 10 կրեդիտ աշխատածավալով:

2. 3. Հետազոտական կառուցամասի 135 կրեդիտից 120 կրեդիտը նախատեսվում է գիտահետազոտական աշխատանքի և գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության պատրաստման, ատենախոսության նախնական փորձաքննության՝ նախապաշտպանության համար, իսկ 15 կրեդիտը՝ գիտական սեմինարներին, աշխատաժողովներին մասնակցության, զեկուցումներով հանդես գալու համար:

2.4. Ծրագիրը բաղկացած է հետազոտական և կրթական կառուցամասերից, որոնցից յուրաքանչյուրով նախատեսված աշխատածավալների օրինակելի բաշխումն ըստ ուսումնական տարիների ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

Ծրագրի հետազոտական և ուսումնական կառուցամասերի օրինակելի համամասնությունը.

Ուստարի	Հետազոտական կառուցամասի կրեդիտների քանակը	Կրթական կառուցամասի կրեդիտների քանակը	Ընդամենը
I	25	20	45
II	35	10	45
III	40	5	45
IV	45	-	45
Ընդամենը	145	35	180

2.5. Ուսումնական կառուցամաս

Ծրագրի կրթական կառուցամասը բաղկացած է պարտադիր և ընտրովի ընդհանուր և մասնագիտական դասընթացներից ու կրթական մոդուլներից, ինչպես նաև պրակտիկայից:

Պարտադիր և ընտրովի դասընթացները կազմում են 26 կրեդիտ աշխատածավալ, որից 6-ը կազմում են ասպիրանտի կողմից ընտրովի դասընթացները: Պրակտիկաները Ծրագրում կազմում են 9 կրեդիտ աշխատածավալ:

2.6. Ընդհանուր դասընթացներն ապահովում կամ լրացնում են հետազոտողի ընդհանրական գիտելիքները և կարողությունները, մասնագիտական դասընթացները՝ մասնագիտական իրազեկությունները, իսկ պրակտիկաները ձևավորում են ասպիրանտի մանկավարժական և հետազոտական հմտությունները: Բոլոր դասընթացները, մոդուլները ավարտվում են քննությամբ կամ ստուգարքով:

2.7. Հետազոտական կառուցամաս

Հետազոտական կառուցամասը Ծրագրում կազմում է 145 կրեդիտ, որից 120-ը կազմում է գիտահետազոտական աշխատանքը, որի բովանդակությունը որոշվում է ատենախոսության թեմայի խնդիրներով, կազմվում է գիտական ղեկավարի հետ համատեղ և ներառում է գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության պատրաստումը, պաշտպանությունը, 10-ը՝ ԲՈՀ-ի կողմից հաստատված ծրագրով որակավորման քննությունները, 15-ը՝ գիտական սեմինարներին, գիտաժողովներին զեկուցումներով հանդես գալը:

3. ԾՐԱԳՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

3.1. Ասպիրանտուրայի ուսուցման ժամանակահատվածի վերջում ատենախոսությունը ներկայացվում է քննարկման: Ատենախոսությունը քննարկվում է նախնական փորձաքննության և հրապարակային պաշտպանության ընթացակարգերի միջոցով՝ համաձայն «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի»:

3.2. Ասպիրանտին սահմանված կարգով շնորհված գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը համապատասխանում է ՀՀ Որակավորումների ազգային շրջանակի 8-րդ մակարդակին: